ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

# ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ

# 2022 ԶԵԿՈՒՅՑ

Հայաստան, Երևան
2022թ.

Norwegian Helsinki Committee

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ NEW GENERATION HUMANITARIAN NGO

## ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ

# 2022 ԶԵԿՈՒՅՑ

Զեկույցը կազմվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ- ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի տեսակետները:

**Զեկույցը կազմեցին**

**ՆՍՀԿ իրավաբաններ**
Շուշան Խնկոյանը
Լուսինե Գասպարյանը

**Դիտարկեցին**
Սերգեյ Գաբրիելյանը
Ալինա Միրզոյանը

**Ձևավորեց**
Լևոն Չիլինգարյանը

**Զգուշացում.**
**Զեկույցում առկա են բռնության հետքեր պարունակող լուսանկարներ և նկարագրություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նյարդերից թույլ անձանց համար:**

© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:

Բոլոր իրավունքները պահպանված են ©NGNGO 2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հապավումներ և հասկացություններ 4

Ներածություն 5

Իրավախախտման դեպքեր 9

Ատելության խոսքը առցանց հարթակում 23

Եզրակացություն 27

Առաջարկություններ 31

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **ԼԳԲՏ** | լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր, |
| **ՍԿԳԻ** | սեռական կողմնորոշվածություն և գենդերային ինքնություն, |
| **ՀԿ** | հասարակական կազմակերպություն, |
| **ՆՍՀԿ** | «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, |
| **ՀՀ** | Հայաստանի Հանրապետություն, |
| **Սեռական կողմնորոշվածություն** | անձի զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անձի հանդեպ, |
| **Գենդերային ինքնություն** | անձի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան պահին վերագրված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անձի նույնականացմանը՝ որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր, |
| **Նույնասեռական** | անձ, որը զգացմունքային, հուզական, սեռական և այլ տեսակների գրավչությունների ամբողջություն է դրսևորում նույն սեռի անձանց նկատմամբ, |
| **Նույնասեռական** | անձ, որի գենդերային ինքնությունը չի համընկնում ծննդյան պահին վերագրված սեռին, |
| **Խտրականություն** | Նույն կամ էականորեն նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունք՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքի, |
| **Հոմոֆոբիա** | անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն հայտնի կամ ենթադրյալ հոմոսեքսուալ (նույնասեռական) անձանց նկատմամբ, կամ հակազդում հոմոսքեսուալ (նույնասեռական) անձանց վարքին և մշակույթին, |
| **Տրանսֆոբիա** | անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն տրանսգենդեր անձանց նկատմամբ, կամ հակազդում տրանսգենդեր անձանց վարքին և մշակույթին: |

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում:

ՀԿ-ն իր գործունեությունն իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից՝ նպաստելու հասարակության և հատկապես խոցելի խմբերի հիմնախնդիրների կարգավորմանը:

ՀԿ-ի առաքելությունն է խթանել իրավահավասարություն, արդարություն, բազմազանություն, աժանապատվություն, և բարեկեցություն՝ մարդու իրավունքների և շահերի պաշտպանության, առողջապահական ծառայությունների հասանելիության ապահովման, կարողությունների զարգացման և մարդասիրական աջակցության միջոցով:

Կազմակերպությունը խոցելի խմբերի, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրավախախտումների վերաբերյալ պարբերաբար հրապարակում է զեկույցներ՝ բարձրաձայնելով առկա խնդիրները և օրենսդրական բացերը, ինչպես նաև ներկայացնում է առաջարկություններ՝ ուղղված հիմնախնդիրների կարգավորմանը և օրենսդրական բարեփոխումների իրականացմանը: Այս ամենին զուգահեռ Կազմակերպությունը շարունակաբար մասնակցում է օրենսդրական նախագծերի քննարկումներին, հետևում օրենսդրական բարեփոխումների նախագծերին՝ ներկայացնելով իրավունքակենտրոն առաջարկներ:

Սույն զեկույցում ամփոփված են 2022թ.-ին Կազմակերպության կողմից տրամադրված իրավախորհրդատվությունները, անձանց սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիմքով (ՍԿԳԻ) արձանագրված իրավախախտման դեպքերը:

**Նշյալ ժամանակահատվածում ՆՍՀԿ-ի կողմից տրամադրվել է թվով 385 իրավաբանական խորհրդատվություն, որից 315-ը ԼԳԲՏ անձանց: Արձանագրվել է 89 իրավախախտման դեպք անձանց սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիմքով: Արձանագրված դեպքերից միայն 31-ով է տրվել ընթացք, մնացած դեպքերով ընթացք չի տրվել տուժողների համաձայնության բացակայության պատճառով:**

**2022թ-ին ՆՍՀԿ-ն ունեցել է ներպետական 8, միջազգային ատյաններում քննվող 2 գործ՝**

## ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԱՏՅԱՆ.

### ՔՐԵԱԿԱՆ

- Է. Ա. (գործով տուժող, ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 112),
- Ա. Ա. (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 258),
- Ա. Ս. (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 258),
- Ս. Պ. (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 258),
- Յ. Ս. (գործով տուժող, ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 308),
- Ա.Ա (գործով տուժող, ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 117):

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

- Ա.Ս-ն ընդդեմ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի, Հովհաննես Գալաջյանի,
- Ա.Ս (ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 71):

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆ

- ՆՍՀԿ-ն ընդդեմ Հայաստանի (ՄԻԵԿ, հոդված հոդված 6.1 ),
- Սահակյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի (ՄԻԵԿ, հոդված 6.1):

**Մարդու իրավունքների պաշտպանությունն առավել արդյունավետ և հասանելի դարձնելու նպատակով ՆՍՀԿ-ն նաև իրականացնում է շահերի պաշտպանություն, որի շրջանակներում համագործակցում է պետական / ոչ պետական և միջազգային կազմակերպությունների հետ:**

**2022թ.-ի ընթացքում ՆՍՀԿ-ի փորձագետների մասնակցությամբ վերանայվել են մոտ տասնյակ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր և ներկայացվել են առաջարկներ հետևյալ իրավական փաստաթղթերի վերաբերյալ.**

## ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Փոխնակ մոր միջոցով մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող անձանց թույլտվություն տրամադրող միջգերատեսչական հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ [1]

## ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- Քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծ,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի n 825-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ,
- Պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության ձևը, ծավալն ու տրամադրելու կարգը, ինչպես նաև դատապարտյալներին տրամադրվող միանվագ դրամական օգնության չափը եվ տրամադրման կարգը սահմանելու մասին որոշման նախագիծ,
- Ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս պետության միջոցների հաշվին թարգմանչի ծառայություններից օգտվելու որոշման նախագիծ,
- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին նախագիծ:

[1] https://ngngo.net/2022/03/17/draft-legislation/

**ՆՍՀԿ-ի նախաձեռնությամբ ներկայացվել են մի շարք օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ և նախագծեր՝**

- **2005թ-ի մարտի 31-ի «ՀՀ դասակարգիչ հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի հրաման՝ ներկայացվել է ՀՀ Առողջապահության նախարարությանը:**
- **«Գենդերի իրավական նշումի փոփոխման մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ ներկայացվել է ՀՀ Առողջապահության, Արդարադատության և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններին:**

**2022թ-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից զեկույցներ են ներկայացվել նաև միջազգային մի շարք կառույցների՝**

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ [2],

ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո [3],

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով,

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ,

Մարդու իրավունքների խախտումների, մոնիտորինգի, հետազոտման և փաստաթղթավորման ոչ կառավարական կազմակերպություն (Human rights watch) [4]

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե
[5] [6]

[2] https://ngngo.net/2022/11/23/yehk/
[3] https://ngngo.net/2022/04/29/human_rights_us/
[4] https://www.hrw.org/hy/world-report/2023/country-chapters/383668?fbclid=IwAR3tK5XTJWOfkGRQ7jAAhF56EVBrcyqsiur5_CaZfVeIi2HrZSqWhzqDByQ
[5] https://ngngo.net/2022/11/23/cedaw-recommendations/
[6] https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCEDAW%2fCSS%2fARM%2f49892&Lang=en

# ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐ

**ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՆՍՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԱՌԱՎԵԼ ՀԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ:**

## ԴԵՊՔ 1

### ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռ. Մ.-ն (անունը փոխված է), իր ենթադրյալ սեռական կողմնորոշվածությամբ պայմանավորված, ընտանիքի անդամների, մասնավորապես՝ հոր և ավագ եղբոր կողմից պարբերաբար ենթարկվել է ֆիզիկական բռնության, իսկ հոգեբանական բռնությունը կրել է շարունակական բնույթ: Բացի այդ՝ անձը զրկված է եղել տնից դուրս գալու, ընկերների հետ շփվելու, հեռախոսից կամ համակարգչից օգտվելու հնարավորությունից: Այս ամենը տևել է ամիսներ:

Անձը իրավական աջակցություն ստանալու խնդրանքով դիմել է 2022թ-ի հունվարի 20-ին, միայն այն բանից հետո, երբ հաջողվել է փախչել տնից [7]

### Դեպքի տեսակը

Ընտանեկան բռնություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Գործին ընթացք չի տրվել, քանի որ վերջինս չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին՝ մտավախություն ունենալով, որ գործի վերաբերյալ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի իրականացվի, և հնարավոր է, որ գործը որևէ հիմքով պարզապես կարճվի:

[7] https://ngngo.net/2022/11/23/yehk/

[8]https://ngngo.net/2022/06/20/24-tv/

## ԴԵՊՔ 2

### ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022թ-ի փետրվար ամսին հայտնաբերվել է, որ 2018 թվականի օգոստոսի 14-ին 24 «Նյուզ» ՍՊԸ-ին պատկանող «24 TV» յութուբյան պաշտոնական ալիքում տեղադրվել է տեսանյութ՝ մի խումբ անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի




Համասեռամոլների արկածները ոստիկանության բաժնում

և անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտումով [8]: Տեսանյութում անձանց դեմքերը ցուցադրված են բաց:

Դեռևս 2018թ-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի [8] համագործակցության արդյունքում ՀՀ ոստիկանության պաշտոնական էջից հեռացվել է «Առաջին հայացքից կանայք, սակայն իրականում աղջկա

զգեստներով տղամարդիկ ու նրանց համախոհները ներխուժեցին ոստիկանության բաժին» վերտառությամբ տեսանյութը, որը վերաբերում էր նույն վերոնկարագրյալ դեպքին: Տեսանյութը հեռացվել է այն հիմքով, որ անձանց դեմքերը ցուցադրված են եղել բաց, որով խախտվել է մի խումբ անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի և անմեղության կանխավարկածի սկզբունքը:

### Դեպքի տեսակը

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի և անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում, ատելության տարածում

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

ՆՍՀԿ-ն գրություն է ուղարկել 24 «Նյուզ» ՍՊԸ-ին, սակայն, ընկերությունից որևէ արձագանք չստանալով, դիմել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին, ՀՀ ոստիկանություն և ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը:
2022թ.-ի հուլիսին ՆՍՀԿ իրավաբանը հանդիպում է ունեցել ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետի հետ:
Գործը գտնվում է ընթացքի մեջ:

## ԴԵՊՔ 3 ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի մարտի 6-ին ժամը 18:20-ի սահմաններում ֆեյսբուք սոցիալական ցանցում «Helen Helen Hakobovna» անունով օգտատերը հեռարձակել է ուղիղ եթեր, որի ընթացքում, բացի բազում վիրավորանքներից, նաև բռնության հրապարակային կոչեր է հնչեցրել, մասնավորապես՝ սպառնացել է այրել նույնասեռական անձանց: Օգտատերը բացահայտ կերպով հայտարարել է ֆիզիկական գործողություններ կատարելու իր մտադրության մասին՝ հետևորդներին կոչ անելով բռնության ենթարկել նույնասեռական անձանց:



### Դեպքի տեսակը

Ատելության խոսք, բռնության ենթարկելու սպառնալիք

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

ՆՍՀԿ-ն դեպքի առթիվ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն [9]:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունից պատասխան գրությամբ հայտնել են, որ ՆՍՀԿ-ի գրությունն ուղարկվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին՝ հետաքննությամբ ընթացքը լուծելու համար:

2022 թվականի մարտի 29-ին ՆՍՀԿ-ն ստացել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի ավագ հետաքննիչ Հ. Գասպարյանի որոշումը: Հետաքննիչի կողմից որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժել հանցակազմի բացակայության հիմքով:

ՆՍՀԿ-ն վերոնշյալ որոշումը բողոքարկել է վերադասության կարգով՝ ՀՀ դատախազություն [10]:

Որոշ ժամանակ անց օգտատերը նյութը ջնջել է և ՆՍՀԿ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է:

## ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 4

2022 թվականի մարտի 23-ին տրանս* անձ Տ.Ա.-ն (անունը փոխված է) դիմել է ՀՀ Անձնագրային և վիզաների վարչության Մարաշի անձնագրային խումբ՝ ՀՀ անձնագիր ստանալու նպատակով: Աշխատակիցները չեն ընդունել ՀՀ անձնագիր տրամադրելու մասին դիմումի փաթեթը, բացի այդ՝ խտրական վերաբերմունք են ցուցաբերել անձի նկատմամբ, ծիծաղել են և հնչեցրել վիրավորական արտահայտություններ [11]:

### Դեպքի տեսակը

Խտրականություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

ՆՍՀԿ իրավաբանը կապ է հաստատել համապատասխան բաժնի աշխատակիցների հետ՝ պահանջելով պարզաբանում՝ անձի դիմումը չընդունելու և խտրական վերաբերմունք ցուցաբերելու հետ կապված: Համապատասխան աշխատակցի կողմից չի պարզաբանվել խնդիրը: Արդյունքում աշխատակիցն ընդունել է անձի դիմումը և տվել համապատասխան ընթացք:

[9] https://ngngo.net/2022/03/21/fb-post/
[10] https://ngngo.net/2022/04/08/fb-hate-crime/
[11] https://ngngo.net/2022/03/28/trans-person-reported-2-arm/

## ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

Վ.Ա.-ն (անունը փոխված է) բնակվում է իր եղբոր և եղբոր ընտանիքի հետ: Վերջիններս մշտապես տարաձայնություններ են ունեցել՝ պայմանավորված Վ.Ա.-ի սեռական կողմնորոշվածությամբ: Եղբայրը, չհանդուրժելով այն հանգամանքը, որ Վ.Ա.-ն նույնասեռական անձ է, ծեծի է ենթարկել վերջինիս և պատճառել նյութական վնաս՝ կոտրելով Վ.Ա.-ին պատկանող գույքը:

### Դեպքի տեսակը

Ընտանեկան բռնություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Տուժողին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն, այնուհետև Վ.Ա.-ն 2022թ-ի մարտի 21-ին հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ոստիկանություն:

Հարուցվել է քրեական գործ, ոստիկանները կիրառել են անհետաձգելի միջամտության որոշում: Որոշ ժամանակ անց եղբայրը հատուցել է պատճառված վնասը և ընտանիքի հետ հեռացել տնից: Տուժողը բողոքը հետ է վերցրել:

## ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

Հ.Վ.-ն (անունը փոխված է) տևական ժամանակ աշխատել է սպասարկման ոլորտում: Վերջինս աշխատանքի վայրում մշտապես գործընկերների հետ ունեցել է կոնֆլիկտներ՝ պայմանավորված իր ենթադրյալ սեռական կողմնորոշվածությամբ:

Աշխատանքի ընթացքում վիճաբանություն է եղել, և գործընկերը հարվածել է Հ.Վ.-ին:

### Դեպքի տեսակը

Բռնություն, խտրականություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2022թ-ի մայիսի 12-ին Հ.Վ.-ն դիմել է ՆՍՀԿ, և անձին տրամադրվել է իրավախորհրդատվություն իր իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև գործի իրավական ընթացակարգերի վերաբերյալ: Անձի կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ոստիկանություն: Հարուցվել է քրեական գործ:

## ԴԵՊՔ 7 ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն.Ղ.-ն մեկ տարի առաջ ՀՀ-ում իրականացրել է սեռափոխության վիրահատություն: Հետվիրահատական շրջանը անցնելուց հետո վերջինս քայլեր է ձեռնարկել անձնագրում սեռի մասին նշումի փոփոխությունը իրականացնելու համար: Ն.Ղ.-ն 2022թ.-ի մարտին դիմում է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն՝ համապատասխան թույլտվությունը ստանալու համար: Ն.Ղ.-ն դիմումին կցել է նաև սեռափոխության վիրահատությունը կատարելու փաստը հավաստող բժշկական փաստաթուղթը: Քանի որ բժիշկը օտարերկրյա պետության բժշկական հաստատությունից էր ժամանել՝ վիրահատությունը կատարելու համար, ուստի բժշկական փաստաթուղթը տրվել էր օտարերկրյա բժշկական հաստատության անունից: Դիմումը ներկայացնելուց անցել է երկու ամիս, սակայն դիմող անձը որևէ պատասխան չի ստացել ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ բաժնից:

### Դեպքի տեսակը

Անձնագրում սեռի նշումի փոփոխման իրավունքի իրականացման խոչընդոտում

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Ն.Ղ.-ն ՆՍՀԿ է դիմել 2022թ-ի մայիսի 18-ին: Գրություն է ուղարկվել ՀՀ ԱՆ՝ տեղեկանալու գործի ընթացքի մասին: Պատասխան գրությամբ ԱՆ ՔԿԱԳ բաժնից հայտնել են, որ գործը կասեցված է, քանի որ մասնագիտական կարծիք ստանալու համար դիմել են օտարերկրյա իրավասու մարմնին: ԱՆ ՔԿԱԳ մարմնի կատարած հարցման պատասխանը ստացվել է 2022թ-ի սեպտեմբերին, որում հերքվել է այն փաստը, որ Ն.Ղ.-ն իրականացրել է վիրահատություն իրենց բժշկական հաստատությունում:
Ներկա պահին գործը գտնվում է ընթացքի մեջ:

## ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 8



Հ. Ա.-ն (անունը փոխված է), 2022թ.-ի հունիսի 5-ի գիշերը, լույս 6-ի առավոտյան ժամը 02:20-ի սահմաններում զբոսնելիս է եղել Վանաձոր քաղաքի փողոցներից մեկում, երբ մի խումբ անձինք մոտեցել են իրեն: Հ. Ա.-ն վերջիններիս հայտնել է, որ տրանս* անձ է, և այդ անձինք հարձակվել են Հ.Ա-ի վրա: Տուժողը փորձել է փախչել և թաքնվել այլ անձի մեքենայի մեջ: Սակայն հետապնդող անձինք տուժողին տեղափոխող վարորդի օգնությամբ հայտնաբերել են վերջինիս և դաժան ծեծի ենթարկել: Տուժողը զանգահարել է ոստիկանություն, սակայն նրա վրա հարձակված անձինք խլել են բջջային հեռախոսը և մի կողմ նետել:

Ոստիկանության աշխատակիցները, հեռախոսից լսելով ձայները, անմիջապես ժամանել են դեպքի վայր: Ոստիկանական մեքենաները տեսնելուց հետո բռնարարները տուժողին թողել են անօգնական վիճակում և հեռացել: Տուժողը ստացել է մարմնական լուրջ վնասվածքներ:

Դեպքի վայր է ժամանել ոստիկանությունը: Տուժողը ոստիկանության բաժին տեղափոխվելու ճանապարհին ոստիկանության աշխատակիցների կողմից ծաղրի է ենթարկվել [12]

### Դեպքի տեսակը

Բռնություն, խտրականություն, խուլիգանություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

ՆՍՀԿ-ի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և կապ պահպանվել վերջինիս հետ: Ոստիկանության աշխատակիցները տուժողին տեղափոխել են համապատասխան բաժանմունք՝ գրավոր հաղորդումը ներկայացնելու համար:

Հաղորդում ներկայացնելուց հետո տուժողը վերադարձել է տուն, որտեղ նրա ինքնազգացողությունը կտրուկ վատացել է: ՆՍՀԿ իրավաբանի աջակցությամբ վերջինս զանգահարել է շտապօգնություն, և անձին տեղափոխել են Վանաձորի բժշկական կենտրոն, որտեղ ցուցաբերվել է անհրաժեշտ բուժօգնություն:

Գործը գտնվում է նախաքննության փուլում:

[12] https://ngngo.net/2022/06/07/atelutyunusparnaliq/

## ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՔԵՅ 9

Ա.Ն.-ն (անունը փոխված է) դուրս է եկել տնից՝ մոռանալով վերցնել իր բջջային հեռախոսը: Մինչ անձի տուն վերադառնալը վերջինիս մայրը վերցրել է հեռախոսը և ուսումնասիրել: Մայրը հեռախոսում գտել է անձնական նյութեր և բացահայտել, որ Ա.Ն.-ն նույնասեռական է: Ա.Ն.-ի տուն վերադառնալուց հետո մայրը նրան պարբերաբար, օրեր շարունակ ծեծի է ենթարկել, որպեսզի «դարձի բերի», սակայն որևէ արդյունքի չհասնելով՝ Ա.Ն.-ի անձնական բնույթի տեսանյութերը տեղադրել է համացանցում:

### Դեպքի տեսակը

Ընտանեկան բռնություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Անձը կարողացել է ՆՍՀԿ դիմել, երբ հաջողվել է տնից հեռանալ՝ 2022թ-ի հունիսի 13-ին: Անձին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն, վեջինս հրաժարվել է գործին ընթացք տալ, քանի որ չի ցանկացել ծնողի դեմ հաղորդում ներկայացնել:

## ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՔԵՅ 10

2022 թվականի հունիսի 13-ի գիշերը, լույս 14-ի առավոտյան ժամը 04:30-ի սահմաններում տրանս* անձ Ս.Ա.-ն (անունը փոխված է) ծեծի է ենթարկվել իր տուն այցելած անծանոթ անձի կողմից, որի արդյունքում ստացել է քթի կոտրվածք:

Անծանոթի հեռանալուց հետո Ս.Ա.-ի ընկերները նրան շտապ տեղափոխել են «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն, որտեղ տուժողը ստացել է առաջին բուժօգնություն: Անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելուց հետո բժիշկը հայտնել է, որ կարիք կա վիրահատական միջամտության, որի համար Ս.Ա.-ինուղեկցող անձից պահանջել են 150. 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Բուժօգնության տրամադրման ընթացքում բուժանձնակազմի կողմից տուժողի հանդեպ անհարգալից վերաբերմունք է ցուցաբերվել՝ կապված վերջինիս սեռական կողմնորոշվածությամբ և գենդերային ինքնությամբ: Բուժանձնակազմը նաև հրաժարվել է տուժողին որոշ ծառայություններ տրամադրել [13]:

## Դեպքի տեսակը

Բռնություն, խտրականություն

## Տրամադրված աջակցությունը և ընթացքը

ՆՍՀԿ-ն անմիջապես դիմել է ՀՀ Առողջապահության նախարարություն, սակայն վերջինիս կողմից պատշաճ արձագանք չի եղել:

Այնուհետև, կապ է հաստատվել Ս.Ա.-ին բուժող բժշկի հետ, և քննարկման արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել վիրահատությունը կատարել՝ վճարման վերաբերյալ տարաժամկետման մասին պայմանագիր կնքելու պայմանով: Պայմանագիրը կնքելուց հետո նշանակվել է վիրահատության ժամ, սակայն ժամեր անց բժիշկը տեղեկացրել է, որ վիրահատություն չեն կարող իրականացնել, եթե վճարումը չկատարվի:

Կրկին կապ է հաստատվել Առողջապահության նախարարության հետ, սակայն կրկին պատշաճ արձագանք չի եղել, որից հետո ՆՍՀԿ իրավաբանը կապ է հաստատել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ:

Արդյունքում տուժողը դեպքի առնչությամբ նաև հաղորդում է ներկայացրել ոստիկանություն:

Միաժամանակ կապ է հաստատվել բժշկական կենտրոնի ղեկավար կազմի հետ՝ կապված տուժողի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի և ծառայությունների տրամադրման հետ, որից հետո միայն բժշկական կազմակերպությունը ցուցաբերել է հարգալից վերաբերմունք անձի նկատմամբ և տրամադրել պատշաճ բուժօգնություն:

[13] https://ngngo.net/2022/06/14/atelutyunubrnutyun/

## ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՔԵՊ 11

2022 թ.-ի հունիսի 18-ի գիշերը, լույս 19-ի առավոտյան ժամը մոտ 02:00-ի սահմաններում տրանս* անձ Մ.Ք.-ին (անունը փոխված է) ու իր ընկերներին Զաքյան փողոցում մի քանի տղա են մոտեցել՝ պահանջելով հեռանալ տարածքից: Մ.Ք.-ն և իր ընկերները հրաժարվել են հեռանալ, որից հետո այդ անձինք հարձակվել են և ծեծի ենթարկել նրանց: Ծեծի հետևանքով Մ.Ք.-ն և իր ընկերները մարմնական վնասվածքներ են ստացել: Մ.Ք.-ն ահազանգել է ոստիկանություն: Մոտ կես ժամ անց ոստիկանները ժամանել են դեպքի վայր և Մ.Ք.-ին ու իր ընկերներին ծեծի ենթարկած անձանց բերման ենթարկել ոստիկանության Կենտրոնական բաժին [14]:
Բաժնում տուժողներից մեկի ինքնազգացողության վատացման պատճառով ժամանել է շտապբուժօգնությունը:

### Դեպքի տեսակը

Բռնություն, խուլիգանություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Տուժողին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:
Հարուցվել է քրեական գործ:

[14] https://ngngo.net/2022/06/21/hertakanbrnutyunn/

## ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՔԵՊ 12

2022 թվականի հուլիսի 27-ին Ն.Է.-ն (անունը փոխված է) այցելել է խանութ՝ գնումներ կատարելու համար: Խանութի աշխատակիցը հասկանալով, որ անձը տրանս է, հրաժարվել է սպասարկել: Ն.Է.-ն ահազանգել է ոստիկանություն և բանավոր հաղորդում ներկայացրել:

### Դեպքի տեսակը

Խտրականություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

ՆՍՀԿ-ն միջադեպի ընթացքում հեռախոսազանգով տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն: Խանութի մենեջերը ներողություն է խնդրել Ն.Է.-ից և սպասարկել: Ն.Է.-ն հաղորդումը հետ է վերցրել:

## ԴԵՊՔ 13 ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2020 թ. հունվար ամսվա զորակոչի շրջանակներում Ս.Ա.-ն անցել է բուժզննումներ, և քանի որ ՀՀ Կառավարության 404-ն որոշմամբ նույնասեռականությունը համարվում է հոգեկան հիվանդություն, այդ հիմքով ճանաչվել է ոչ պիտանի զինծառայության համար:

«Արմեդ» համակարգի գործարկումից հետո 2022թ.-ի հուլիս ամսին Ս.Ա.-ն այցելել է տեղամասային պոլիկլինիկա և պարզել, որ թերապևտը նույն համակարգից տեղեկացել է իր նույնասեռական լինելու մասին: Այդ ամենը անձի նկատմամբ խարանի և խտրականության դրսևումների շարժառիթ է հանդիսացել:

Բացի այդ՝ տվյալ համակարգի միջոցով տեղի է ունեցել անձի անձնական տվյալների բացահայտում բուժաշխատողի համար՝ չունենալով որևէ հիմնավոր կամ էական նշանակություն անձի հիվանդության և/կամ բուժման պատմության վրա:

### Դեպքի տեսակը

Անձնական տվյալների պաշտպանության, մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի խախտում, խտրականություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

ՆՍՀԿ-ն դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ՄԻՊ և ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալություն՝ անձանց սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության մասին տեղեկատվությունը «Արմեդ» համակարգում անհասանելի դարձնելու համար: ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնել են, որ գործընթացներ են նախատեսվում իրականացնել ներպետական համակարգում առկա «Հիվանդությունների միջազգային դասակարգիչը» միջազգային չափորոշիչներին հարմարացնելու ուղղությամբ:

2022 թվականի հուլիսի 31-ին ժամը 03:35-ի սահմաններում «Beda Yegiazaryan» անունով ֆեյսբուքյան օգտատերը հեռարձակել է ուղիղ եթեր, որի ընթացքում, տևական ժամանակ ինչ-որ տարածքում հետևել է այնտեղ կանգնած տրանս* անձանց: Այնուհետև, երբ այդ տարածքում մնացել է մեկ տրանս անձ, վերջինս

մոտեցել է այդ անձին և բռնության ենթարկել՝ բռնուցքով, ապա ոտքերով հարվածել է անձին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Ընթացքում նաև ֆեյսբուքյան օգտատերը բռնության կոչ է հնչեցրել՝ հորդորելով ծեծի ենթարկել բոլոր տրանս անձանց:

**Ժամեր անց YouTube սոցիալական ցանցում Karen Arayan անունով օգտատերը հրապարակել է տեսանյութ՝ «ՍԱՏԿԱՑՐԵՑ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՓՈՂՈՑՈՒՄ / ԿԵՑՑԵՍ ՎԱՀԵ» վերնագրով:**




Տեսանյութից պարզ է դառնում, որ Karen Arayan-ը հանդիսանում է «Լույսի բանակ» ՌԲՀԿ նախագահը: Տեսանյութի ամբողջ ընթացքում Karen Arayan-ը հրապարակայնորեն արդարացնում է բռնությունը և հայտնում, որ Վահե Եղիազարյանին «Լույսի բանակ» ՌԲՀԿ-ի կողմից տրվել է շնորհակալագիր, քանի որ տրանս անձին ծեծի ենթարկելով՝

նա կատարել է հայրենանվեր գործ: Միաժամանակ, Karen Arayan օգտատերը տեսանյութով ազդարարում է տրանս անձանց ծեծի ենթարկելու ակցիայի սկիզբը [15]:

### Դեպքի տեսակը

Բռնություն, ատելության խոսք, բռնության հրապարակային արդարացում և կոչ:

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

ՆՍՀԿ-ն դիմել է համապատասխան կառույցներին՝ ՀՀ ոստիկանություն՝ դեպքի առթիվ քրեական գործ հարուցելու, և ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ բռնությունը խրախուսող և ատելություն քարոզող կազակերպության լուծարման հարցով:

ՆՍՀԿ-ի կողմից նեկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա հարուցվել է քրեական գործ: Գործը գտնվում է նախաքննության փուլում: Միաժամանակ նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից նշյալ ՀԿ-ն լուծարելու վերաբերյալ գրությունը վերահասցեագրվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ իրավական գնահատական տալու նպատակով [16]:

## ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ԴԵՊՔ 15**

«Երկիր մեդիա» հեռուստածրագրով ցուցադրվում է ռեժիսոր Գոռ Վարդանյանի «Կոռուպցիա 2. Հատուցում» հեռուստասերիալը: Հեռուսատասերիալի մի շարք դրվագներում անդրադարձ է կատարվել նույնասեռական անձանց: Ցուցադրված դրվագներում ոստիկանության աշխատակցի դերակատար




Գոռ Վարդանյանը թույլ է տվել արտահայտություններ, որոնցով արդարացրել է բռնությունը, կոչ արել բռնություն գործադրել ԼԳԲՏ անձանց հանդեպ, վիրավորել և նվաստացրել է տրանս անձանց, ատելություն քարոզել անձանց նկատմամբ՝ պայմանավորված նրանց գենդերային ինքնությամբ [17]:

[15] https://ngngo.net/2022/08/02/uxixeterumbrnutyun/
[16] https://ngngo.net/2022/12/05/qreakangorc-luysibanak/
[17] https://ngngo.net/2022/06/08/korupcia2/

## Դեպքի տեսակը

Ատելության
խոսք

## Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2022 թ.-ի հունիսի 8-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն գրություն է ուղարկել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (Հանձնաժողով)՝ խնդրելով օրենքով սահմանված կարգով ՀՀ Սահմանադրությամբ տրված լիազորությունների շրջանակներում համապատասխան ընթացք տալ ցուցադրված դրվագների առնչությամբ: Հարուցվել է վարչական վարույթ [18]:

Հանձնաժողովը 2022թ.-ի հուլիսի 7-ին՝ «Կոռուպցիա 2. Հատուցում» հեռուստասերիալի վերաբերյալ հարուցված վարչական վարույթներով հրավիրված նիստի ժամանակ, արձանագրել է, որ «Կոռուպցիա 2. Հատուցում» ֆիլմի ընթացքում խախտվել են տեսալսողական հաղորդման հեռարձակման սահմանափակումները՝ համամարդկային արժեքների նսեմացում, վարկաբեկում, գռեհկաբանություն և հայհոյախոսություն: Արդյունքում որոշում է կայացվել «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով [19]:

ՆՍՀԿ-ն 2022թ-ի հուլիսի 25-ին կրկին գրություն է ուղարկել Հանձնաժողով՝ խնդրելով համապատասխան ընթացք տալ հեռուսատասերիալի մեկ այլ սերիալում նույնասեռական անձի դեր կատարողի նկատմամբ ակնհայտ բռնություն պարունակող, նույնասեռական անձանց նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիք և ատելություն պարունակող դրվագների մասով: Հանձնաժողովը մերժել է գրությունը՝ նշելով, որ ատելություն պարունակող դրվագների մասով բողոքին կարող են անդրադառնալ իրավապահ մարմինների կողմից այդ խախտումներն արձանագրելուց հետո:

ՆՍՀԿ-ն հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ոստիկանություն, որը մերժվել է:

[18] https://ngngo.net/2022/06/14/korupcia2-harucvel-e-varuyt/
[19] https://ngngo.net/2022/08/03/husaber-varchakantuyj/

## ԴԵՊՔ 16 ԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022թ.-ի օգոստոսի 18-ին Վանաձոր քաղաքի փողոցներից մեկում Հ.Վ.-ն (անունը փոխված է) զբոսնելիս է եղել, երբ իրեն մոտեցել են երկու անծանոթ անձինք: Անծանոթներն անմիջապես հարձակվել են Հ.Վ.-ի վրա և ծեծի ենթարկել՝ հարվածներ հասցնելով նրա մարմնի տարբեր մասերին: Հետո դանակը պահել են Հ.Վ-ի ուղղությամբ՝ պահանջելով, որ հեռանա իրենց քաղաքից, քանի որ նա տրանս կին է, և դա իրենց համար ամոթ է:

Միաժամանակ սպառնացել են, որ եթե նա չհեռանա, ապա կսպանեն: Հ.Վ.-ն ահազանգել է ոստիկանություն:

Դեպքի վայր ժամանած ոստիկանները բոլորին տարել են ոստիկանական բաժանմունք: Սակայն նյութերում մեղավոր անձանց մասին տեղեկություններ չկան: Բաժնում տուժողից հաղորդում վերցնելիս ոստիկանները թույլ չեն տվել զանգ կատարել, ինչպես նաև թույլ չեն տվել հաղորդման մեջ նշել ստացված մարմնական վնասվածքների մասին:

### Դեպքի տեսակը

Բռնություն, խտրականություն, սպառնալիք

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Տուժողին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: Ոստիկանության կողմից ընդունվել է հանցագործության մասին հաղորդումը: Հարուցվել է քրեական գործ, այն գտնվում է ընթացքի մեջ:

## ԴԵՊՔ 17 ԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022թ-ի սեպտեմբերի 4-ին՝ երեկոյան ժամը մոտ 8:30-ի սահմաններում, Ա.Ս.-ն դուրս է եկել իր տան շենքի մոտ գտնվող գեղեցկության սրահից, որտեղ մի տղամարդ հարվածել է Ա.Ս.-ի դեմքին, որի հետևանքով վերջինս ընկել է և մարմնական վնասվածքներ ստացել դեմքի ու ձեռքի շրջանում: Տուժողը ահազանգել է ոստիկանություն, սակայն վերջիններս հրաժարվել են դեպքի վայր ժամանել՝ ասելով, որ նա ինքը պետք է մոտենա:

### Դեպքի տեսակը

Բռնություն

### Տրամադրված աջակցությունը և ընթացքը

ՆՍՀԿ իրավաբանի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:

Ոստիկանության կողմից ընդունվել է հանցագործության մասին հաղորդումը: Հարուցվել է քրեական գործ, այն գտնվում է ընթացքի մեջ:

# ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

# ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Ատելության խոսքը դեռևս ո՛չ ներպետական, ո՛չ էլ միջազգային մակարդակներում չունի մեկ համընդհանուր սահմանում: Այն գործնականում միջազգային կառույցների կողմից ձևակերպվել է ընդհանրական եզրույթներով, որոնք ուղղորդումներ են տալիս օրենսդրորեն արգելելու խոսքի որոշակի տեսակներ [20]:

Ժամանակակից աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում սոցիալական ցանցերը զգալի տեղ են զբաղեցնում հասարակության առօրյա կյանքում : Այդ ամենին զուգահեռ խտրականության, անհանդուրժողականության և ատելության խոսքի դրսևորումները առկա են նաև առցանց հարթակում: Դրսևորումները նկատելի են ինչպես անհատ օգտատերերի, այնպես էլ լրատվամիջոցների պաշտոնական սոցիալական հարթակներում: Հայաստանյան առցանց հարթակում դրսևորվող խտրականության, անհանդուրժողականության և ատելության խոսքի հիմնական թիրախներից են ԼԳԲՏ անձինք:

Վերջիններիս նկատմամբ դրսևորվող ատելության խոսքը կրում է պարբերական բնույթ և դրսևորվում է օգտատերերի զգալի մասի կողմից: Առավել ակնառու դեպքերը ներկայացված են սույն զեկույցի Դեպք 2, 3, 14 և 15-ում, որտեղ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ակնհայտ ատելություն է քարոզվել: Դեպք 14-ում անգամ բռնություն է գործադրվել անձի նկատմամբ, և այն ուղիղ հեռարձակվել է, որի ընթացքում նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչ է արվել: Այդ ամենին զուգահեռ կազմակերպությունները հրապարակայնորեն արդարացրել են այդ բռնությունը.մեղավոր անձը «Լույսի բանակ» ՌԲՀԿ-ի կողմից արժանացել է շնորհակալագրի, քանի որ տրանս անձին ծեծի ենթարկելով՝ նա կատարել է հայրենանվեր գործ:

Այս ամենին զուգահեռ ատելության խոսք է տարածվում և բռնությունն արդարացվում է նաև հանրային հեռարձակումներով: Մասնավորապես, Դեպք 15-ում հեռարձակվող հեռուսատասերիալը ակնհայտ արդարացնում է բռնությունը: Այս ամենը իր անխուսափելի հետևանքներն է ունենում հասարակության աշխարհընկալումների, վերաբերմունքի վրա: Սրա մասին են վկայում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության, ատելության և բռնության դեպքերի զգալի աճը 2022թ.-ին, հատկապես տարվա երկրորդ կիսամյակում:

Առցանց հարթակում խտրականության և ատելության խոսքի թիրախում են հայտնվում ոչ միայն ԼԳԲՏ անձինք, այլ նաև վերջիններիս հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունները: 2022թ-ի

[20] https://drive.google.com/file/d/17GYrkFGs8PCd3X1zh8k5f8toonE1kA-O/view

օգոստոսից ՆՍՀԿ-ն թիրախավորվել է ֆեյսբուքյան և յություբյան էջերում օգտատեր հանդիսացող «Vardan Ghukasyan Վարդան Ղուկասյան»-ի կողմից:

Միաժամանակ օգտատերը հարթակ է տրամադրել այլ անձի, որը զրպարտող արտահայտություններ է հնչեցրել ՆՍՀԿ-ի հասցեին: Սա նպատակ է հետապնդում վարկաբեկել ՆՍՀԿ-ին և խոչընդոտներ ստեղծել խոցելի խմբերի բարեկեցությանն ուղղված ՀԿ-ի գործունեության, այդ թվում՝ կազմակերպության կողմից իրականացվող ՄԻԱՎ-ի կանխարգելման պետական ռազմավարական ծրագրի իրականացման համար՝ բարձրացնելով այդ ծրագրով սահմանված առանցքային խմբերի շրջանում առկա խարանը, խտրականությունը և, հետևաբար, ՄԻԱՎ-ով վարակման ռիսկերը:
Առցանց հարթակում ատելության խոսքի տարածման, բռնության արդարացման վերաբերյալ ներպետական կարգավորումները դեռևս շարունակում են թերի մնալ, իսկ առկա կարգավորումները արդյունավետ չեն գործում, մասնավորապես այն դեպքերում, երբ դրանք հնչեցվել են անձանց սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիմքով:
ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի նորմերին, միջազգային իրավունքի սկզբունքներին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությանը, ներպետական քրեական օրենսդրության համապատասխանությունը ապահովելու համար՝ 2022թ.-ի հուլիսի 1-ին ընդունվել է ՀՀ նոր քրեական օրենսգիրքը [21]: Նոր օրենսգրքի 329-րդ հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար: Այսպիսով՝ վերոնշյալ հանգամանքներից դրդված հանցագործությունները կհանգեցնեն ավելի ծանր պատասխանատվության և պատժի:
Դրա նպատակներից է նաև ապահովել անձի, հասարակության և պետության անվտանգությունը հանցավոր ոտնձգություններից: Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների ցանկում բացակայում է ՍԿԳԻ-ն՝ որպես շարժառիթ:

[21] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169566

ՀՀ կառավարության կողմից 2021թ.-ի նոյեմբեր 18-ին կայացված N-1902 Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը [22]:

Ծրագրով նախատեսված է մինչև 2023թ-ի հունիսի 3-րդ տասնօրյակը «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմին: Նախագծով ակնկալվում է կատարելագործել օրենսդրությունը՝ բռնության, ատելության խոսքի, թշնամանքի դեպքերը կանխելու և հանրային համերաշխություն ապահովելու նպատակով: Այս առումով «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հարցում էր արել և տեղեկացել, որ դեռևս որևէ էական քայլեր չեն ձեռնարկվել:

Օրենսդրական կարգավորումների անհրաժեշտություն կա նաև առկա ատելության խոսքի նորմերը առցանց հարթակում կիրառելու տեսանկյունից: Նախ պետք է լուծել հարցը, թե ինչպես ապահովել, որ անցանց միջավայրում գործող օրենքները գործեն նաև առցանց միջավայրում: Որոշ երկրներ, օրինակ Իսպանիան, ատելության խոսքի նորմերում ներառել է դրույթ այն մասին, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև առցանց միջավայրում՝ այդպիսով հստակորեն սահմանելով, որ այդ իրավական նորմերը հավասարապես կիրառելի են նաև առցանց նյութերի նկատմամբ:

Բացի ատելությունը որպես քրեական պատիժ նախատեսող օրենքից՝ ՀՀ-ում առկա են մի շարք այլ օրենքներ, իրավական ակտեր և ներքին կանոնակարգեր, որոնք կարգավորում են օրինակ համացանցի տիրույթը, լրատվամիջոցների աշխատանքը և այլ ոլորտներ: Այնուամենայնիվ, այդ կարգավորումները բավարար երաշխիքներ չեն նախատեսում ատելության հիմքով հանցագործությունների դեպքերով իրավապաշտպանություն իրականացնելու տեսանկյունից:

[22] https://www.arlis.am/Annexes/6/2021_N1902hav.1.pdf

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՍԿԳԻ հիմքով խտրականության և իրավունքի ոտնահարման դեպքերը ՀՀ-ում դեռևս զգալի մաս են կազմում իրավախախտումների շարքում: Փաստագրված դեպքերը ցույց են տալիս երկրում ԼԳԲՏ անձանց նկատմամբ թե՛ հասարակության, թե՛ իրավապահ մարմինների բացասական վերաբերմունքը՝ պայմանավորված անձանց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշվածությամբ և գենդերային ինքնությամբ:

ՆՍՀԿ-ի կողմից արձանագրված իրավախախտման դեպքերով տուժողներից շատերը խուսափել են դիմել իրավապահ մարմիններին, քանի որ մտավախություն են ունեցել որ իրենց բողոքները պատշաճ քննություն չեն անցնի, իրենք կենթարկվեն կրկնակի խտրականության, ինչպես նաև կբացահայտվի վերջիններիս սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը: Արդյունքում, խարանի, խտրականության, բռնության և/կամ խոշտանգման ենթարկված ԼԳԲՏ անձինք զրկվում են իրենց խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, և ստեղծվում է անպատժելիության իրավիճակ, որը հասարակության շրջանում ձևավորում է անհանդուրժողականության մթնոլորտ ԼԳԲՏ անձանց նկատմամբ, ինչպես նաև ծնում է նոր հանցագործություններ և խթանում իրավախախտումների դեպքերի աճը:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրավախախտումները ուղիղ պայմանավորված են ինչպես հասարակության իրավագիտակցության ցածր մակարդակով և կարծրատիպերով, այնպես էլ օրենսդրական բացերով և թերի կարգավորումներով: Մասնավորապես, մինչ օրս ՀՀ-ում կարգավորված չէ գենդերի հաստատման բժշկական միջամտությունների, ինչպես նաև գենդերի նշումի փոփոխման հետ կապված իրավական կարգավորումները, ոլորտը շարունակում է թերի մնալ՝ առաջացնելով մի շարք խնդիրներ առողջապահական, սոցիալական, իրավական և այլ ոլորտներում: Խնդիրներից մեկը ներառված է սույն զեկույցում (Դեպք 7): Այդ դեպքը ևս մեկ անգամ փաստում է ներպետական համակարգում գործընթացի իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Ի թիվս այլ հարցերի՝ խնդրին անդրադարձ է կատարել նաև «Կանանց նկատմամբ խտրականության վերացման» ՄԱԿ-ի կոմիտեն (այսուհետ նաև Կոմիտե ) 83-րդ նստաշրջանի [23]՝ 2022թ-ի նոյեմբեր ամսին հրապարակված զեկույցում: Կոմիտեն մտահոգություններ է հայտնել Հայաստանում ԼԲՏԻ կանանց նկատմամբ խտրականության, ճնշումների, ատելության

[23] https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/SessionDetails1.aspx?SessionID=2582&Lang=en

խոսքի մասին հաղորդումների, ինչպես նաև գենդերային անցման ու գենդերի մասին նշումի փոփոխության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների բացակայության և ԼԲՏԻ կանանց իրավունքների մասին բուժաշխատողների իրազեկության ցածր մակարդակի հետ կապված [24]:

Հատկանշական է, որ ՀՀ Կառավարությունը խուսափել է պատասխանել Կոմիտեի կողմից ՀՀ-ին ուղղված այն հարցերին, որոնք վերաբերել են ԼԲՏԻ անձանց իրավունքների ապահովման հետ կապված խնդիրներին:

Հայաստանի Հանրապետությունը անկախացումից ի վեր անդամակցում է մի շարք միջազգային կառույցների և վավերացրել է մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնցով ստանձնել է պարտավորություն ներպետական օրենսդրությունը հարմարեցնել միջազգային փաստաթղթերից բխող իրավանորմերին: Ելնելով այդ պարտավորություններից՝ 2022թ-ին ներպետական համակարգում իրականացվել են մի շարք օրենսդրական բարեփոխումներ, մասնավորապես, 2022թ.-ի հուլիսի 1-ին ընդունվել է ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, որով ապաքրեականացվել են մի շարք հոդվածներ և ներառվել նոր հոդվածներ, օրինակ՝ խտրականությունը (հոդված 203):
Բացի քրեական օրենսգրքից՝ առողջապահական ոլորտում նույնպես որոշակի օրենսդրական փոփոխություններ են տեղի ունեցել: Մասնավորապես, 2022թ-ի դեկտեմբերի 16-ին ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատվել է «Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 7-ի N 06-ն հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 105-Ն հրամանը, որով վերացվել են մի շարք խմբերի անձանց համար՝ նույնասեռական, մարմնավաճառ, կալանավայրերում գտնվող անձինք և այլն, դոնորությունը բացառող բացարձակ հակացուցումները և արյունատվության մշտական արգելքները: Արգելքի վերացման անհրաժեշտության մասին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նախորդ տարիների ընթացքում մշտապես բարձրաձայնել է և ներկայացրել համապատասխան օրենսդրական նախագծեր, առաջարկություններ: Համապատասխան փոփոխությունը հնարավոր է դարձել «Համայնքների ներգրավվածություն, մարդու իրավունքներ, գենդերային հավասարություն» աշխատանքային խմբի, ՀՀ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված Միջոցառումները համակարգող հանձնաժողովին առընթեր գործող մշտական

[24] https://ngngo.net/2022/11/23/cedaw-recommendations/

աշխատանքային խմբի, մի շարք հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ջանքերի շնորհիվ ՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ արդյունավետ ու հետևողական համագործակցության արդյունքում:
Վերոնշյալ խմբի արդյունավետ համագործակցության արդյունքում դեռևս 2022թ-ի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարությունը հաստատել էր «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը, պայմանները, չափորոշիչները, աջակցության քարտի ձևը և տրամադրվող գումարի չափը սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն և հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը, որով վերացվել են ՄԻԱՎ և ոչ մանրէազատ տուբերկուլոզ ունեցող տարեց եվ (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու նախկինում գործող հիմքերը:

Օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի ընդունումը, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկված այլ գործողությունները ատելության հիմքով հանցագործությունների քննության, բացահայտման և իրավական որակման որոշակի դրական քայլեր են պարունակում, սակայն օրենսդրական այս փոփոխությունները չեն կարող արդյունավետ լինել, եթե անպատժելիության մթնոլորտը շարունակվի:

Չնայած պետության կողմից իրականացվող բարեփոխումներին՝ պետք է նշել, որ օրենսդրական դաշտը շարունակում է թերի մնալ: Մասնավորապես՝ մինչև օրս չի ընդունվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ներպետական օրենսդրությամբ նույնասեռականությունը շարունակում է համարվել հոգեկան հիվանդություն, բացակայում են գենդերի հաստատման համար բժշկական միջամտությունների և գենդերի նշումի փոփոխման վերաբերյալ իրավակարգավորումները և այլն:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում, որպես խտրականության պաշտպանված հատկանիշ ներառել սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը,

- Ընդունել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որում պաշտպանված հիմքերի ցանկում ներառված կլինեն սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը:

- Ձեռնարկել գործուն և արդյունավետ քայլեր «Գենդերի իրավական նշումի փոփոխման մասին» ՀՀ օրենքի ընդունման ուղղությամբ,

- Ներպետական հիվանդությունների միջազգային դասակարգիչը համապատասխանեցնել ՀՄԴ-11-ին,

- Արմեդ համակարգում անհասանելի դարձնել անձանց սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության մասին տվյալները,

- ՀՀ Քրեական օրենսգրքի 203-րդ, 329-րդ և 330-րդ հոդվածներում համապատասխանաբար որպես խտրականության պաշտպանված հատկանիշ, ատելության հրապարակային հայտարարության և բռնություն գործադրելու հրապարակային կոչի, սպառնալիքի շարժառիթ ներառել սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1 հոդվածում որպես խտրականության պաշտպանված հատկանիշ ներառել սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը,

- Ձեռնարկել գործուն և արդյունավետ քայլեր՝ ուղղված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրույթները համապատասխան մարմինների կողմից իրականացնելուն:

© Զեկույցը հրատարակվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից
© Ձևավորումը՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի

© 2023. The Report was published by New Generation Humanitarian NGO
© 2023. Designed by New Generation Humanitarian NGO

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ